# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 46–Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ և 65–րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8 , դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է.***

Հաստատել Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2023 թվականին բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտ ներկայացնելուն համաձայնություն տալու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը որոշելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 47–Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16–ի N 1708–Ն որոշմամբ սահմանված կարգի 12–րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2022 թվականի օգոստոսի 26-ի N 01/16/06037-2022 գրությունն ու ս/թ նոյեմբերի 24-ին Տաթևի համայնքապետարանում անցկացված հանրային լսման թիվ 5 արձանագրությունը, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ-0, դեմ-0, ձեռնպահ-0, ավագանին ***որոշում է.***

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ(սուբվենցիաներ) ստանալու նպատակով Տաթև համայնքի կողմից 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման ներկայացվող՝

1. «Ավտոաշտարակի ձեռք բերում»,

2. «Խոտ գյուղում 296 մ ճանապարհի հիմնանորոգում, ջրահեռացման առուների տեղադրում, մայթերի կառուցում»,

3. «Հալիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցում»,

4. «Հարժիս բնակավայրի համար կոյուղու ցանցի կառուցում»,

5. «Շինուհայր բնակավայրի ՆՈՒՀ-ի մեկ մասնաշենքի վերանորոգում»,

6. «Տաթև բնակավայրի մշակույթի տան շենքի վերանորոգում և գույքի համալրում»,

7. «Տաթև համայնքի վարչական տարածքով անցնող Մ-2 միջպետական ու միջհամայնքային նշանակության ավտոճանապարհի երկայնքով գիշերային լուսավորության ցանցի կառուցում»

ծրագրային հայտերին՝ համաձայն հավելվածներ 1-ից 7-ի:

2.Բյուջետային ֆինանսավորման հայտերը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ գնահատման և պետական նպատակային հատկացումներ ստանալու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելուց հետո հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 48-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-1 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է***՝

1. Հայաստանի Հանրապետութան Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 9-ին, ժամը՝ 15:30-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

| Կողմ -7 | Դեմ -0 | Ձեռնպահ -1 |
|---|---|---|
| ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ | | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ |
| ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ | | |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ | | |
| ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ | | |
| ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ | | |
| ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ